ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N __
«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՀԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝
« 21 » հունվարի 2020 ԹՎԱԿԱՆԻ
N *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-20/4-1-ՄՄՍ-Լ»*
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր **« 19 » «փետրվարի» 2020թ.**

«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարող Մ. Ապերյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՄՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հարությունյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի XV-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով « 21 » հունվարի 2020թ. N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-20/4-1-ՄՄՍ-Լ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.1 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված սննդամթերքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սահմանել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

1.2 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2,146,000 (երկու միլիոն հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի Հավելված 1-ի անբաժան մաս կազմող գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

1.4 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են 3 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ	«ՄՄՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ 23	ք. Գյումրի, Կ. Դեմիրճյան 63
ՀՎՀՀ 06910273	ՀՎՀՀ 05546049
ՀՀ 900238000583	«Հայէկոնոմբանկ»ՓԲԸ
Կենտրոնական գանձապետարան	Հ/Հ 1631280043581
---------- Մ. Ապերյան	---------- Ա. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 21 » հունվարի 2020 թ. կնքված
N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-20/4-1-ՄՄՍ-Լ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
								մատուցման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
3	55321200 3	Խոհարարական ծառայություններ	Ըստ պայմանագրի	հատ	820	2 146 000	2617	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ 23	2617	2020թ. փետրվարի 19-ից- փետրվարի 29-ը ներառյալ, պատվիրատուի հայտի հիման վրա, յուրաքանչյուր աշխատանքային օր

*Նշված քանակները ենթակա են նվազման՝ կախված շահառուների թվից:

ԳՆՈՐԴ
«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ 23
ՀՎՀՀ 06910273
ՀՀ 900238000583
Կենտրոնական գանձապետարան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ
ք. Գյումրի, Կ. Դեմիրճյան 63տ.
ՀՎՀՀ՝ 05546049
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163128043581
---------- Ա. Հարությունյան
/ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 21 » հունվարի 2020թ. կնքված
N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀՇՁԲ-20/4-1-ՄՄՍ-Լ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
3	55321200	3 Խոհարարական ծառայություններ		1312000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	2146000	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ 23
ՀՎՀՀ 06910273
ՀՀ 900238000583
Կենտրոնական գանձապետարան

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ
ք. Գյումրի, Կ. Դեմիրճյան 63տ.
ՀՎՀՀ՝ 05546049
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16312004358[illegible]

_____ Ա. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.